ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

9 մարտի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

32
(2882)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԽՄՈՐՈՒՄՆԵՐ՝ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Դատական համակարգում ներքին խմորումներն ավելի են խորացել: Խոսակցություններ են պտտվում, որ իրենց խաբել են: Բանն այն է, որ դատավորների ներքին խմբի խոսակցության բացահայտումից հետո, երբ առաջին հրաժարականի դիմում ներկայացրեց ԲԴԽ անդամ, դատավոր Արշակ Վարդանյանը, տպավորությունն այնպիսին էր, որ թեման պետք է այս մեկ հրաժարականով փակված լիներ, քանի որ Արշակ Վարդանյանին խոստացել են իշխանական վերնախավից, որ նրա հրաժարականից հետո մյուս դատավորներին հանգիստ կթողնեն, սակայն նրանց նկատմամբ ճնշումները շարունակվել են ու հասել եւս երկու դատավորի՝ Կարեն Մարդանյանի եւ Սերգեյ Մարաբյանի հրաժարականին: Սպասվում է նաեւ Արագածոտնի մարզի դատավոր Անդրանիկ Մնացականյանի հրաժարականը:

Ասել է թե՝ Արշակ Վարդանյանին խաբել են:

Դատական համակարգում այս խառնաշփոթից հետո հարց է առաջանում՝ ինչու մյուս դատավորների ճակատագրին չի հետեւում դատավոր Ռուբիկ Մխիթարյանը եւ ազատման դիմում գրում. միգուցե նրան այդ դատավորների ներքին խոսակցությունը իշխանական վերնախավին հասցնելու համար պաշտոն կամ այլ բան են խոստացե՞լ:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ուշագրավ գրագրություն է ի հայտ եկել, որտեղ վերոնշյալ դատավորները իրենց ներքին խմբում կոնկրետ քաղաքական իշխանության եւ նրանց կանանց հասցեին հայհոյանքներ են արել, ու դատավորներից մեկն այդ գրագրությունը հասցրել է քաղաքական իշխանություններին, ինչից հետո էլ հայհոյանքներ գրած դատավորներին ստիպում են ազատման դիմումներ գրել սեփական նախաձեռնությամբ ու հեռանալ համակարգից:

Ըստ մամուլում տարածված տեղեկությունների՝ գրագրությունը քաղաքական իշխանություններին հասցրել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ռուբիկ Մխիթարյանը, որն իշխանությունների «սրտի» դատավորն է, ու ամեն գնով ցանկանում են նրան տանել ԲԴԽ՝ որպես դատավոր անդամ: Իսկ ինչո՞վ է զբաղված ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը՝ ի դեմս նախագահ Կարեն Անդրեասյանի: ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը Սահմանադրությամբ եւ օրենսգրքով սահմանված լիազորություններն իրականացնելու միջոցով երաշխավորում է դատարանների եւ դատավորների անկախությունը: Սակայն, իրականում Կարեն Անդրեասյանը ոչ թե պաշտպանում է դատավորների անկախությունը, այլ հենց նա է տարբեր ճանապարհով դատավորներին ճնշողներից մեկը:

Հինգշաբթի օրը Երեւանի ավագանու ֆինանսավարկային եւ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը առաջին փուլով ընդունել է տրանսպորտի ուղեվարձի թանկացման աղմկահարույց նախագիծը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ քաղաքային իշխանությունները վերջին պահին առանց ընդդիմադիր ավագանու անդամների են հարցը բերել օրակարգ ու միանձնյա ընդունել այն: «Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել գաղտագողի, այսինքն՝ նիստը հրավիրված է եղել, բայց հարցը օրակարգ մտցրել են նիստը սկսելուց 1 ժամ առաջ՝ հրատապի տակ. թե որն էր հրատապությունն այս հարցի, չեմ կարող ասել: «Հանրային ձայն»-ի ներկայացուցիչները դուրս եկան ու չմասնակցեցին հանձնաժողովի նիստին, «Ազգային առաջընթաց» խմբակցության ներկայացուցիչներից միայն Պեդրո Զարուկյանն էր ներկա, իսկ մերոնցից հանձնաժողովի 3 անդամներն էլ ներկա էին: Երբ ՔՊ-ի հետ ընդհանուր հայտարարի չեկանք, ես, թվեր հրապարակելով, նրանց ասացի, որ վատ կառավարիչ են, ու մենք էլ լքեցինք հանձնաժողովի դահլիճը: Իրենք իրենց անցկացրին նախագիծը՝ առանց ընդդիմության»,-«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմեց ավագանու ընդդիմադիր «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Մեսրոպ Մանուկյանը: Տրանսպորտի թանկացման նախագիծը ընդգրկված է լինելու ավագանու՝ մարտի 12-ի նիստի օրակարգում. կներկայացվի արդեն վերջնական քննարկման ու կընդունվի: Ավագանու ընդդիմադիր թեւը հակված է բոյկոտել նիստը: «Ես վստահ եմ, որ մեր խմբակցությունը օրինագծի քվեարկությունը կբոյկոտի. բոյկոտը միակ գործիքակազմն է, քանի որ դեմ քվեարկելը նույնն է, ինչ կողմ քվեարկելը»,- ասաց Մեսրոպ Մանուկյանը:

«Սեներջի»-ի «իրավիճակը» ամենուր է. Անգամ ոչ մասնագետի մոտ, որն ընթերցի Շրջակա միջավայրի նախարարության կողմից վառելիքի ձեռք բերման լուսանկարում պատկերված փաստաթուղթը, կառաջանա ընդամենը 2 միտք՝ կամ ՀՀ-ում բենզին չկա, կամ թալան ժամանակներ են մեր օրերում, քանզի այլ կերպ հնարավոր չէ հասկանալ, թե ինչու ոչ մի կազմակերպություն ցանկություն չի հայտնել մատակարարել Հակոբ Սիմիդյանի նախարարությանը 11.2 տոննա վառելիք: Հ.Գ. Կոռուպցիայի դեմ պայքարի մասնագետները փաստում են, որ նման դեպքերում պոտենցիալ հանցագործները, արհեստական վիժեցնելով տենդերը, նախադրյալ են ստեղծում գնումը կատարել մեկ (իրենց նախընտրած) անձից եւ համապատասխան գնով ու ատկատով: «Ժողովուրդ» օրաթերթը կհետեւի ՇՄ նախարարությունում տիրող տենդերային բարքերին:



Պետական անտառներում, անտառային հողերում եւ բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության եւ անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրության կիրառման նկատմամբ պետական հսկողության գործառույթներ իրականացնող պետական լիազոր մարմինը՝ էկոպարեկային ծառայությունը, 2024 թվականի առաջին եռամսյակում 4 մլն 329 հազար դրամ արժողությամբ բենզին է գնել: Ըստ պայմանագրի՝ էկոպարեկային ծառայությունը մի դեպքում գնել է 7000 լիտր բենզին՝ Ռեգուլյար, 480 դրամով, իսկ մյուս դեպքում՝ 1900 լիտր 510 դրամով: Գնման եւ ձեռք բերման պայմանագրերը կնքվել են «Մաքս օիլ» ՍՊԸ-ի հետ: Հավելենք նաեւ, որ «Մաքս օիլ»-ը պատկանում է Հայաստանի հանրապետական կուսակցության նախկին պատգամավոր Հարություն Փամբուկյանին: «Մաքս օիլ»-ի տնօրենը Կամո Մելքոնյանն է: Նա նաեւ «Կամոյլ» ՍՊԸ-ի տնօրենն ու սեփականատերն է: Նրա բիզնեսները հեղափոխությունից հետո բավական արտոնյալ կարգավիճակում են: «Մաքս օիլ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2016 թվականին: Այս ընկերության՝ վառելիքի շուկա մուտք գործելը 2016 թվականի իշխանությունները՝ ի դեմս Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի այդ ժամանակվա նախագահ Արտակ Շաբոյանի, ներկայացրին որպես բենզինի շուկայի ազատականացում ու մրցակցության մեծացում: Այժմ վառելիքի շուկայում կան խոշոր ներկրողներ, օրինակ՝ CPS-ը, Flash-ը եւ Max Oil-ը: Նշենք, որ էկոպարեկային ծառայության նոր օրենքն ուժի մեջ է մտել այս տարվա հունվարի 1-ից: Ծառայության լիազորություններն են պետական անտառների, անտառային հողերի եւ բնության հատուկ պահպանվող տարածքներում պահպանության իրականացումը, պետական անտառների, անտառային հողերի եւ բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության կանոնների ու նորմերի պահպանման նկատմամբ հսկողությունը, հրդեհների կանխարգելման, ինչպես նաեւ հրդեհների եւ արտակարգ այլ պատահարների ժամանակ անհետաձգելի միջոցառումների իրականացումը եւ այլն: Թե ինչքանով են պահպանվում մեր անտառները, խիստ հարց է:

ԶՐՈՒՅՑ

«ՄԻԱԿ ԵՐԱՇԽԻՔՆ Ի՞ՆՉ Է ԱՐԵԼ ՄԻՆՉ ՕՐՍ»

Այս օրերին հայրենի իշխանությունները քննարկում են Հայաստանի՝ ԵՄ անդամության թեկնածու դառնալու հարցը:

Սրա վերաբերյալ ArmLur.am-ը մի քանի հարց է ուղղել ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին:

-Պարո՛ն Սիմոնյան, Դուք առաջինը հայտարարեցիք, որ Հայաստանը պատրաստ է ԵՄ անդամության թեկնածու դառնալ: Ինչպե՞ս եք այս գործընթացը պատկերացնում, ի՞նչ ժամկետներում եք սա հնարավոր համարում:

-Չկա նման ժամկետ, չկա նման կանխատեսում: Օրինակ՝ մեր հարեւան Վրաստանը տարիներ առաջ դիմեց, սպասեց եւ վերջերս միայն ստացավ թեկնածուի կարգավիճակ, Թուրքիան արդեն մոտավորապես 40-50 տարի է՝ փորձում նման բան անել: Դա հեշտ գործընթաց չէ, խոսքը գնում է արժեքների մասին, Հայաստանը դավանել է եւ դավանում է ժողովրդավար արժեքները Եվրամիության հետ:

-Պարո՛ն Սիմոնյան, իսկ նման հայտարարություններ անելիս հաշվի առնվե՞լ են բոլոր անվտանգային սպառնալիքները, որոնց կարող է բախվել Հայաստանը՝նկատի ունենալով հատկապես ռուսական կողմի հայտարարությունները:

ՌԴ արտգործնախարար Լավրովն օրեր առաջ հայտարարեց, թե Ռուսաստանը հետեւում է ՀՀ ղեկավարության հայտարարություններին եւ ի գիտություն կընդունի դրանք՝սեփական գործնական քայլերը պլանավորելիս:

-Այսինքն՝երրորդ երկի՞րը պետք է որոշի Հայաստանի ապագան սպառնալիքի ներքո:

-Պարո՛ն Սիմոնյան, լավ թե վատ, այս պահին Հայաստանի անվտանգային միակ բարձիկը ՀԱՊԿ-ն է. եթե առանց որեւէ այլընտրանքի հրաժարվում ենք սրանից, ի՞նչ է լինելու, հատկապես՝ այն դեպքում, երբ արձանագրում ենք, որ նոր պատերազմի վտանգ կա. արդյոք Եվրոպան պատրա՞ստ է մեզ գրկաբաց ընդունել:

-Ի՞սկ այդ միակ երաշխիքն ի՞նչ է արել մինչ օրս:

Նախ ով է ասում՝ որեւէ անվտանգային երաշխիք, ասում եք ՀԱՊԿ, դրա այլընտանքը ՆԱՏՕ-ն է, բայց Հայաստանը չի քննարկել ու չի քննարկում որեւէ ձեւաչափով այդ կառույցին անդամակցության հարցը:

Ինչ վերաբերում է վախենալուն, մենք մշտապես անհանգիստ ենք, զգուշավոր ենք, Հայաստանը անհանգստացած է, զգույշ է, գիտակցում է, որ տարբեր սպառնալիքներ կարող են առաջ գալ, բայց ակնհայտ է, որ այդ սպառնալիքները բազմիցս տեղի են ունեցել, եւ Հայաստանն արդեն իսկ տուժել է, տարածքներ կորցրել, դրա պատճառով մեր հայրենակիցներն են մահացել: Հիմա մենք փորձում ենք որեւէ ձեւով այդ սպառնալիքը հեռացնել, քանի որ ձեր ասած սպառնալիքն արդեն մի քանի տարի է՝ մշտական ձեւով տեղի է ունենում. դրանք սահմանի վրա հարձակումներն են, Լեռնային Ղարաբաղի տարածքում տեղի ունեցած դեպքերն են՝ Հին Թաղեր, Սեւ լճեր: Ակնհայտ է, որ այս տարբերակն արդեն իսկ խնդիրներ ունի եւ որեւիցե մեկը, նույնիսկ՝ ընդդիմությունը, չի կարող մեզ մեղադրել այլընտանքային միջոցներ չձեռնարկելու մեջ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐԻ ԴՈՒՐՍԲԵՐՈՒՄԸ

ԱՐԿԱԾԱԽՆԴԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈ՞ՒՆ

«Ռուսական կողմը տեղեկացվել է «Զվարթնոց» օդանավակայանից ռուսական սահմանապահների դուրսբերման հայկական նախաձեռնության մասին»,- այս մասին Հայաստանի եւ Կիպրոսի ԱԳ նախարարների մամուլի ասուլիսի ժամանակ ասաց ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը:

ArmLur.am-ը կապ հաստատեց քաղաքական-հասարակական գործիչ Էդգար Ղազարյանի հետ՝ հասկանալու համար, թե ինչ նպատակով կարող էին դուրս բերվել ռուսական սահմանապահները:

«Իսկ ասե՞լ է, թե հայկական կողմը երբվանից է այդ կարողությունը ձեռք բերել, եւ ինչ իրադարձություն է եղել, որ այդ կարողությունը ձեռք է բերել: Օրինակ՝ մինչեւ հիմա անցած տարվա մարտ ամսից սահմանափակ ծառայության պետի պաշտոնը թափուր է: Գիտի՞ Արարատ Միրզոյանը այդ մասին, ի՞նչ է եղել, որ իրենք կարողություններ են ձեռք բերել, որ անցած տարի չունեին, վեց ամիս առաջ չունեին, հիմա արդեն այդ կարողությունները ձեռք են բերել: Ի՞նչ է տեղի ունեցել, պարզաբանե՞լ է Արարատ Միրզոյանը: Ոչ մի այդպիսի բան էլ տեղի չի ունեցել, ընդամենը իրենք քաղաքական որոշում են կայացրել Հայաստանում կայացնել հակառուսական ագրեսիվ, վտանգավոր, մեր երկրի եւ ժողովրդի անվտանգության համար սպառնալիք հանդիսացող գործողություններ: Ընդամենը դա է անում Արարատ Միրզոյանը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ»,- ասաց Ղազարյանը:

Ղազարյանի խոսքով՝ իրենք արդեն մի անգամ իրենց արկածախնդիր քաղաքականության հետեւանքով տապալել են խաղաղ բանակցային գործընթացը Լեռնային Ղարաբաղի հարցում, տարել մեզ պատերազմի եւ հիմա էլ նոր արհավիրք, նոր պատերազմներ են ուզում բերել մեր երկիր:

«Թող որեւէ ձեւով պարզաբանեն, ասեն՝ անցյալ տարվա կամ վեց ամիս առաջվա համեմատ՝ տեղի է ունեցել այս կամ այն գործողությունները, ընդունվել են այս կամ այն որոշումները, ամրապնդվել են սահմանապահ ծառայության կարողությունները, եւ հիմա «Զվարթնոց» օդանավակայանում կարող են իրականացնել միայն ԱԱԾ սահմանապահ զորքերը, որոնք, ի դեպ, ասեմ՝ մինչեւ հիմա էլ են իրականացնում: Այսինքն՝ այնպես չի, որ հիմա «Զվարթնոց» օդանավակայանում ԱԱԾ սահմանափակ ծառայություն չկա: Ես, օրինակ, վերջին 20 տարին ճամփորդում եմ, հայ սահմանապահներից բացի, ուրիշ ծառայող ինձ դեռ չի հանդիպել»,- նշեց Ղազարյանը:

Անդրադառնալով Միրզոյանի ասածին, թե հայկական կողմի ծանուցումը ռուսական կողմին բավարար կլինի, եւ հարցն այդքանով կլուծվի՝ Ղազարյանն ասաց.

«Արարատ Միրզոյանը դիվանագիտության հետ ոչ մի առնչություն չունեցող պատահական, դիլետանտ, տգետ անձնավորություն է. ինքը չի պատկերացնում դիվանագիտական հարաբերությունների էությունը, հարցերի քննարկման ընթացակարգերը, մեխանիզմները եւ իր պրիմիտիվ տրամաբանությամբ, մտածողությամբ հավանաբար մի հայտարարագիր ներկայացնելը բավարար է դիվանագիտական հարթությունում, միջպետական հարաբերություններում խնդիրներ պարզաբանելու եւ լուծելու համար, բայց իրականում դա այդպես չի»:

Մեզ հետ զրույցում Ղազարյանը նաեւ նշեց, որ իրականում ցանկացած հարց, առավել եւս եթե դրանք կարեւոր նշանակություն ունեցող հարցեր են, անհամաձայնություն կարող է լինել կողմերի միջեւ, դրանք ենթակա են առարկայական քննարկման:

«Ընդ որում՝ քննարկման ենթակա են նախապես, ոչ թե հայտարարագիրը տալու պահից հետո: Այսինքն՝ ոչ թե պետք է հայտարարագիրը տա եւ հետո քննարկել, այլ քննարկում ունենալ, կողմերի հետ գալ որոշակի պայմանավորվածության եւ դրանից հետո սկսել դրանց դիվանագիտական ձեւակերպումները պաշտոնական փաստաթղթերով: Իսկ այս տգետներին այս ամենը բացատրելը, կարծում եմ, շատ սխալ է»,- ասաց Ղազարյանը՝ զրույցն ավարտելով:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԶԳՈՒՇԱՑՐԵԼ ԵՆ

Ռուսաստանի Դաշնությունում ԱՄՆ դեսպանատունը նախազգուշացնում է հրապարակել առաջիկա երկու օրվա ընթացքում Մոսկվայում հնարավոր ահաբեկչությունների մասին:

«Դեսպանատունը վերահսկում է տեղեկություններն այն մասին, որ ծայրահեղականները ծրագրում են մոտ ապագայում հարձակվել Մոսկվայում մարդկանց մեծ հավաքների վրա՝ ներառյալ համերգները: ԱՄՆ քաղաքացիներին խորհուրդ է տրվում առաջիկա 48 ժամվա ընթացքում խուսափել մեծ կուտակումներից»,- ասվում է ԱՄՆ դիվանագիտական ներկայացուցչության մամուլի հաղորդագրության մեջ:

Ավելի ուշ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությունը եւ ԱՄՆ Պետդեպարտամենտի հյուպատոսական բյուրոն զգուշացրել են վտանգի մասին՝ դեսպանատանը հղումով: Բացի այդ, ինչպես նշել է Комерсант-ը, Պետդեպարտամենտն առավելագույնի է բարձրացրել Ռուսաստան մեկնելու վտանգի մակարդակը: Միաժամանակ, ԱՄՆ դեսպանատան կայքի ռուսալեզու տարբերակում վտանգի մասին նախազգուշացում չկա:

Ռուսական իշխանությունները դեռ չեն մեկնաբանել ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչության հայտարարությունը:

ԵԼՈՒՅԹ Է ՈՒՆԵՑԵԼ

Հայաստանի Հանրապետության առաջին արտգործնախարար եւ «Ժառանգություն» կուսակցության հիմնադիր Րաֆֆի Կ. Հովհաննիսյանը ելույթներ է ունեցել մարտի 6-ից 7-ը Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում տեղի ունեցած Եվրոպայի ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) համագումարում:

Դիմելով հազարից ավելի պատվիրակներին, եվրոպացի առաջնորդներին, ՁԼՄ-ների ներկայացուցիչներին, դիվանագիտական ու քաղաքական շրջանակներին եւ միջազգային հանրության անդամներին՝ Հովհաննիսյանը ներկայացրել է իր քննադատական դիտարկումները եւ տեսակետները ռուս-ուկրաինական պատերազմի, Թուրքիայի հովանավորությամբ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի տարածքների գրավման արյունալի արշավի, էթնիկ զտումների, մշակութային ցեղասպանության, ինչպես նաեւ օրինականորեն ընտրված առաջնորդների եւ այլ ռազմագերիների շարունակական բանտարկությունների վերաբերյալ:

«Աշխարհաքաղաքականությունն ինքնանպատակ չէ եւ պետք է հատկապես Եվրոպայի համար հիմնված լինի համընդհանուր ժողովրդավարական արժեքների եւ չափանիշների վրա», -եզրափակել է նա:

Ըստ աղբյուրի՝համագումարի նիստերին զուգընթաց Րաֆֆի Հովհաննիսյանը հանդիպումներ եւ տեղեկատվության փոխանակումներ է ունեցել Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լեյենի, Հունաստանի վարչապետ Կիրիակոս Միցոտակիսի, Խորվաթիայի վարչապետ Անդրեյ Պլենկովիչի եւԵ մի շարք այլ պաշտոնյաների հետ:

ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅԱՆ ԱԿՑԻԱՆԵՐ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ «Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժումը առաջիկայում ցանկանում է իրականացնել մարզային հանդիպումներ:

«Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժման հիմնական նպատակը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականն է:

Նրանք մարտի 9-ին՝ ժամը 15:00-ին, հանրահավաք են իրականացնելու Գյումրի քաղաքի Թատերական հրապարակում, մարտի 10-ին՝ ժամը 18:00-ին՝ Արմավիրի մարզի Քարակերտ գյուղում,

մարտի 11-ին՝ժամը 13:00-ին՝մամուլի ասուլիս՝ մարտի 13-ին Երեւանի Ազատության հրապարակում կայանալիք հանրահավաքին ընդառաջ:

Հիշեցնենք, որ նախորդ անգամ «Միասին» այլընտրանքային հասարակական-քաղաքական շարժումը ակցիա էր անցկացրել փետրվարի 20-ին: Հանրահավաքի ընթացքում կազմակերպիչները խորհրդարանում ընդդիմադիր խմբակցություններին առաջարկել էին սկսել վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ կառավարությանը անվստահություն հայտնելու գործընթաց:

Հիշեցնենք, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը 2018 թվականին Գյումրիի Վարդանանց հրապարակից սկսեց Սերժ Սարգսյանի իշխանավարման հնարավոր երրորդ ժամկետի դեմ նախաձեռնած իր պայքարը, որը ավարտվեց Նիկոլ Փաշինյանի՝ վարչապետի պաշտոնում նշանակվելով:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԲԱՐՁՐ Է ԳՆԱՀԱՏԵԼ

Էստոնիայի Հանրապետություն պաշտոնական այցի շրջանակում ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Էստոնիայի ԱԳ նախարար Մարգուս Ցահքնայի հետ: Կողմերը փաստել են Հայաստանի եւ Էստոնիայի միջեւ առկա ջերմ միջպետական հարաբերությունների մասին, որոնց հիմքում ընդհանուր ժողովրդավար արժեքներն են: Զրույցի սկզբում քննարկվել է Հարավային Կովկասում առկա անվտանգային իրադրությունը: Ալեն Սիմոնյանը նշել է, որ Հայաստանը հավատարիմ է տարածաշրջանում խաղաղության հաստատման օրակարգին եւ ներկայացրել Հայաստան-Ադրբեջան բանակցությունների գործընթացը: «Տարածաշրջանային կոմունիկացիաները պետք է գործեն ինքնիշխանության, իրավազորության, հավասարության եւ փոխադարձության սկզբունքներով: Սահմանազատումն ու սահմանագծումը պետք է անցկացվեն Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա»,- ընդգծել է Ալեն Սիմոնյանը: Էստոնիայի ԱԳ նախարարը բարձր է գնահատել Հայաստանի հավատարմությունը խաղաղության օրակարգին: «Հայաստանը մեզ համար բարեկամ երկիր է: Էստոնիան պատրաստ է ամեն կերպ աջակցել Հայաստանին տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության հաստատման հարցում»,- ասել է ԱԳ նախարարը: Քննարկվել են Հայաստան-Էստոնիա, Հայաստան-ԵՄ հարաբերությունների զարգացմանը վերաբերող մի շարք հարցեր, ինչպես նաեւ իրավիճակն Արեւելյան Եվրոպայում:

ՍՏԵՐԻ ՇԱՐՔԻՑ

ՓԱՇԻՆՅԱՆԸ «ԲԱՑԵԼ Է» ԳՈՐԾԱՐԱՆ

Նիկոլ Փաշինյանի ստերը անչափելի են: Նա գնացել է գազաբալոնի արտադրության գործարանի բացմանը այն դեպքում, երբ դա բացել էր նախկին վարչապետ Կարեն Կարապետյանը: Իսկ ամենազավեշտալին այն է, որ այդ գործարանը չի աշխատում:

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է բացահայտել վարչապետի ստերը: Նա նախկինում այլ բան էր խոստանում, հիմա տրամագծորեն հակառակն է անում: 22.12.2018թ.-ին Փաշինյանը մասնակցեց Գազաբալոնների արտադրության գործարանի բացմանը Վանաձորում: Հրապարակավ խոստացավ, որ Վանաձորը կվերագտնի արդյունաբերական քաղաքի դերը: Հայտարարվեց, որ գործարանը կառուցվել է իրանական «Ռադ Սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ կողմից: Նիկոլ Փաշինյանը շրջայց կատարեց գործարանում: «Ռադ Սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ հիմնադիրներ Հոսսեյն Յաղուբպուրը եւ Արայիկ Ասրյանը նշեցին, որ ներդրել են 6 մլն ԱՄՆ դոլար, իսկ ընդհանուր ներդրումը կգերազանցի 21 մլն դոլարը: Նշեցին, որ բալոնները մեծ պահանջարկ ունեն, աշխարհում չորրորդն է Իրանից, Գերմանիայից ու ԱՄՆ-ից հետո: Գործարանի աշխատանքների մեկնարկից հետո օրական արտադրողականությունը կլինի 200 բալոն, իսկ 2019թ. համալրվող սարքավորումների շնորհիվ թողունակությունը կբարձրանա մինչեւ 1000 բալոնի՝ Հայաստանի, Ռուսաստանի, Հնդկաստանի, Ղազախստանի, Սաուդյան Արաբիայի եւ այլ երկրների համար: Փաշինյանը փակ խորհրդակցություն արեց, ասաց, որ խոսել են բալոնների արտադրությունը նոր սերնդի դնել: Ասաց, որ աննախադեպ է նման գործարանի բացումը: 2021թ. ծրագիրը կամբողջանա, եւ աշխատատեղերի քանակը կհասնի 120-ի: Իսկ իրականում «Ռադ Սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ կողմից Լոռու մարզում կառուցվող գործարանների հիմնարկեքի արարողությունը տեղի է ունեցել դեռ 2017թ. հոկտեմբերի 7-ին, մասնակցել էր վարչապետ Կարեն Կարապետյանը: Բայց զավեշտը ոչ միայն մի անգամ բացված գործարանի բացումն էր, այլ այն, որ Նիկոլ Փաշինյանի՝ գործարանի բացմանը մասնակցելուց ամիսներ անց արդեն խոսվեց գործարանի փակման մասին: 2019թ. մայիսին մամուլը պարզեց, որ գործարանը չի աշխատում: Ըստ տարիների՝ գործարանն ունեցել է հետեւյալ թվով աշխատողներ.

- 2018թ. - 1 աշխատակից
- 2019թ. տարբեր ամիսների՝ 1-8 աշխատակից
- 2020թ. - 7 աշխատակից:

Ավելի ուշ գործարանի հայ համասեփականատեր Արայիկ Ասրյանն ասել էր, թե «Ռադ Սանե Վաշամիր գրուպ» ընկերությունում 85% բաժնեմաս ունեցող իրանցի գործարարը Վանաձորում ներդրումային ծրագիրը կիսատ է թողել եւ հրաժարվել խոստացած ընդհանուր 21 մլն դոլար ծրագրի իրագործումից: Գործարանի մասին վերջին տեղեկատվությունը հրապարակվել է 21.04.2021թ. Լոռու մարզպետարանի կայքում: Այն մասին է, որ մարզպետն այցելել է Դարպաս համայնքում գործող «ՌՍՎ» հայ-իրանական կոմպոզիտային բալոնների (գազաբալոնների) արտադրության գործարան, որը առաջին խոշոր խմբաքանակը առաջիկա 2 օրերին կուղարկի Մոսկվա: Համաձայն համասեփականատիրոջ՝ գործարանի՝ մինչ այդ ձախողման պատճառը եղել են պատերազմն ու համավարակը: 2021 թվականին խոստացված 120 աշխատողի փոխարեն՝ գործարանում, ըստ համասեփականատիրոջ, աշխատում էր 15 հոգի: Չէր կատարվել նաեւ օրը 1000 բալոն արտադրելու խոստումը: 2021 թվականից հետո գործարանի մասին տեղեկությունները դադարեցին:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՈՒՄ

Հայաստանը համագործակցում է ԵՄ հետ՝ տնտեսական կայունությունը եւ տնտեսական ռեսուրսների դիվերսիֆիկացումն ապահովելու նպատակով:

Այս մասին ասել է Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը Անթալիայի դիվանագիտական ֆորումին մասնակցության շրջանակներում թուրքական «Անադոլու» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում՝ անդրադառնալով ՀՀ-ԵՄ հարաբերություններին:

Հայաստանի եւ ԵՄ-ի հարաբերությունների սերտացման վերաբերյալ հարցին ի պատասխան՝ Արարատ Միրզոյանը նշել է, որ ՀՀ-ն շարունակում է խորացնել հարաբերությունները տարբեր ոլորտներում ինչպես ԵՄ-ի, այնպես էլ եվրոպական երկրների հետ՝ վկայակոչելով առկա ինտենսիվ քաղաքական երկխոսությունը:

Հայաստանի արտաքին գործերի նախարարը հայտարարել է, որ Հայաստանը համագործակցում է ԵՄ հետ՝ տնտեսական կայունությունը եւ— տնտեսական ռեսուրսների դիվերսիֆիկացումն ապահովելու նպատակով:

«Մենք ցանկանում ենք ավելի խորացնել մեր հարաբերությունները ԵՄ-ի հետ»,- նշել է Միրզոյանը՝ մեջբերելով ՀՀ վարչապետ Փաշինյանի հետեւյալ հայտարարությունը. «Հայաստանը պատրաստ է հարաբերությունները խորացնել ԵՄ հետ այնքան, որքան Եվրոպական միությունը դա հնարավոր կհամարի»:

ՀԱԿԱՌԱԿ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Մարտի 7-ին՝ Կառավարության նիստից հետո, լրագրողների հետ զրույցում էկոնոմիկայի նորանշանակ նախարար Գեւորգ Պապոյանը նշեց, որ տնտեսության դիվերսիֆիկացումը այն իրավիճակը չէ, երբ քո մեկ խոշոր առեւտրային գործընկերը փոխարինվում է մեկ այլով, այլ այն, երբ դու ունես մի քանի խոշոր առեւտրային գործընկերներ եւ բազմաթիվ փոքր առեւտրային գործընկերներ:

«Տնտեսության դիվերսիֆիկացումը մի գործընթաց է, որի արդյունքում Հայաստանը համաչափ կախված է լինում աշխարհից, եւ աշխարհի երկրներն էլ իրենց չափով համաչափ կախված են լինում Հայաստանից: Սա փոխադարձ գործընթաց է»,-ասել է նա:

ArmLur.am-ը կապ հաստատեց տնտեսագետ Սուրեն Պարսյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչ է սա իրենից ենթադրում, եւ ինչ զարգացումներ կարող են լինել. «Հայաստանի արտահանման 40 %-ը կամ 35%-ը բաժին է ընկնում Ռուսաստանին. սա ցույց է տալիս, որ ռուսական քաղաքականության փոփոխության արդյունքում Հայաստանը կարող է բավականին լուրջ տնտեսական խնդիրների առջեւ կանգնել: Նման իրավիճակ է նաեւ մեր ներքին տնտեսության կառուցվածքում՝ առեւտուր, ծառայություն, արդյունաբերություն, գյուղատնտեսություն: Վերջին տարիներին առեւտրի ծառայության մասնաբաժինը աճում է այն դեպքում, երբ արդյունաբերությունը եւ գյուղատնտեսությունը, որի հիմնական արտադրանքը ունի բավական փոքր աճ կամ անկում: Այսինքն՝ մենք վերջին 6 տարիների ընթացքում ճիշտ հակառակ ուղղությամբ ենք գնացել»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵՐԻ ԳԵՐԱԿՇԻՌ ՄԱՍԸ՝ ԿԻՆ ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ

Պարեկային ծառայությունում պատշտոնի նշանակման համար ընդունելություն-մրցույթի ստուգումները շարունակվում են:

Մարտի 5-ից ՆԳ նախարարության կրթահամալիրում մեկնարկել է ապագա պարեկների հարցազրույցի փուլը, որին մասնակցում են ֆիզիկական պատրաստականության եւ մասնագիտական պիտանելիության համապատասխանության համալիր ստուգման փուլերը հաղթահարած դիմորդները:

Մարտի 7-ին կրթահամալիրում ստուգման փուլի ընթացքին էր հետեւում ՆԳ նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը:

Կանանց ներգրավվածությունը խթանելու նպատակով 368 մրցույթային տեղերի գերակշիռ մասը հատկացվել է կին դիմորդներին:

ՆԳ նախարարության նախաձեռնությամբ լավարկվել են ոստիկանությունում ծառայության ընդունվելիս դիմորդներին ներկայացվող բժշկական եւ ֆիզիկական պահանջները: Վերանայման արդյունքում լուծվել են գործնականում օբյեկտիվորեն ծագած մի շարք խնդիրներ, որոնց արդյունքում բարձրացել է կին դիմորդների դիմելիությունը:

Ընթացիկ ստուգման փուլին կանանց ներկայացվածությունը ցույց է տալիս, որ թեկնածուների հասակին եւ քաշին ներկայացվող սահմանային շեմերի նվազեցման արդյունքում նրանցից շատերը կին պարեկների շարքերը համալրելու հնարավորություն են ստացել:

Հանձնաժողովներից յուրաքանչյուրը բաղկացած է վեց անդամից: Ընդգրկված են ՆԳ նախարարության եւ պետական կառավարման այլ համակարգերի, միջազգային կառույցների, ինչպես նաեւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովների անդամների խոսքով՝ պարեկային ծառայություն ընդունելություն-մրցույթի շրջանակում հարցազրույցի անցկացման պրակտիկան ընդօրինակելի է, իսկ հարցուպատասխանի ձեւաչափը՝ արդյունավետ:

Հարցազրույցի միջոցով ստուգվում են դիմորդների բարեվարքությունը, ունկնդրելու եւ հաղորդակցության հմտությունները, կոնկրետ իրավիճակում որոշումներ կայացնելու ունակության, ինքնատիրապետման եւ այլ որակներ:

Հոգեբանի խոսքով՝ հատկապես պարեկային ծառայության ոլորտում կարեւորվում են անհատի պատասխանատվության զգացումը, կարգուկանոնի եւ հասարակության շահերը պաշտպանելու գործում կարողությունների ներդրումը, նաեւ թիմային կարողությունները: Այս փուլում հաղորդակցման կարողությունների գնահատումը հնարավորություն է տալիս ընտրելու այնպիսի դիմորդների, որոնք արտաքին ծառայության ընթացքում տարբեր իրավիճակներում կկարողանան հասկանալ քաղաքացու հոգեբանությունը եւ կկիրառեն համապատասխան հմտություններ:

Ստուգման փուլին ներկայացած քաղաքացիական անձանցից բացի, թեկնածուների շարքում էր նաեւ ոստիկանության Մալաթիայի բաժնի անչափահասների գործերով եւ ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի տեսուչ Աստղիկ Թորոսյանը. նա ոստիկանությունում շուրջ 11 տարվա ծառայության փորձ ունի:

Ոստիկանական համակարգում ծառայության անցնելու երազանքի, համազգեստի հանդեպ համակրանքի եւ կին ոստիկանի դերի մասին խոսել է նաեւ Հայկուհի Հակոբջանյանը: Նրա խոսքով՝ ոստիկան լինելը կոչում է, որը պետք է պատվով կրել:

Հարցազրույցի փուլը հաղթահարած դիմորդները ապրիլի 15-ից ՆԳՆ կրթահամալիրում 5-ամսյա ուսուցում կանցնեն:

Մասնագիտական որակյալ կրթությունը ինչպես հասարակական կարգի ապահովման, այնպես էլ հանցագործությունների նախականխման, կանխման ու բացահայտման գործում առանցքային նշանակություն ունի:

ԴԵՊԻ ԻՏԱԼԻԱ

ԱՊՕՐԻՆԻ ՈՐԴԵԳՐՄԱՆ ՍԿԱՆԴԱԼ

Ապօրինի որդեգրումների աղմկոտ քրեական դատմությունը արդեն 2 տարի է՝ դատարանում է: 11 հոգի մեղադրվում է երեխաների առքուվաճառքի մեջ:

«9-ը ներգրավված են եղել նորածինների խնամքը հանձնելու նպատակով վաճառքի համար կազմակերպված խմբի կազմում, մյուս երկու մեղադրյալները արդեն իրենց պաշտոնեական լիազորությունների չարաշահումների հետ կապված են ներգրավված որպես մեղադրյալ»,- ասաց Քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության ավագ քննիչ Տիգրան Կիրակոսյանը:

Քննչական կոմիտեի ավագ քննիչն ասում է՝ Հայաստանից Իտալիա որդեգրված 20 երեխաների մասով է նախաքննությունն ավարտվել:

Երեխաների ապօրինի որդեգրման սկանդալը պայթեց 2019-ին, երբ Ազգային անվտանգության ծառայությունը հայտարարեց՝ ապօրինի գործընթացներով Իտալիա են որդեգրվել տասնյակ փոքրիկներ: Նկարագրված էին մի քանի սխեմաներ. մայրերին ծննդատներում ստիպել են հրաժարվել երեխաներից, արտերկիր են որդեգրվել առողջական կեղծ փաստաթղթերով նաեւ առողջ փոքրիկներ, այնինչ տարիներ շարունակ որդեգրել ցանկացող հայաստանցիները որդեգրման բազայում առողջ երեխաներ չէին գտնում:

Ի՞նչ է պարզվել քննության ընթացքում. ըստ քննիչ Կիրակոսյանի՝ հանցավոր խումբ է գործել:

Սոցապի, Արդարադատության նախարարության, քաղաքապետարանի ներկայացուցիչները, Հանրապետական ծննդատան ղեկավար Ռազմիկ Աբրահամյանը իր մի քանի բժիշկների հետ «Մանկան տան» նախկին տնօրենը եւ Իտալիայում որդեգրմամբ զբաղվող հավատարմագրված կազմակերպությունների ներկայացուցիչ Անուշ Գարսանցյանն են մեղադրյալների թվում:

Անուշ Գարսանցյանը, ըստ քննիչի, հանցավոր խմբի ղեկավարն է. ողջ պրոցեսը, ասում է, նա է նախաձեռնել՝ իտալացիներին երեխային ներկայացնելուց մինչեւ որդեգրման գործընթացի ավարտ: 2005-ից մինչեւ 2019 թվականը իտալացի որդեգրողներից մեկ միլիոն 700 հազար եվրո է ստացել:

Գործով մեղադրյալները չեն ընդունում մեղադրանքը, իսկ գործը դատարանում դեռ առաջ չի գնում:

Armlur.am-ը դատարանում զրուցեց փաստաբան Վարդուհի Էլբակյանի հետ, որը ուշագրավ մանրամասներ հայտնեց: Այս քրեական գործով ամենազարմանալին այն է, որ քրեական գործը 1,5 տարի Հակակոռուպցիոն դատարանից տեղափոխվեց կրկին առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՑԻՍՏԵՌՆԸ ՊՈԿՎԵԼ Է

Մարտի 8-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Տավուշի մարզում: Ժամը 09:50-ի սահմաններում «DAF» մակնիշի հեղուկ գազ տեղափոխող ավտոցիստեռի վրայից Նոյեմբերյան-Իջեւան ավտոճանապարհի Բաղանիս գյուղի վարչական տարածքում դեռեւս անհայտ հանգամանքներում ցիստեռնը պոկվել է: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, պոկվելու հետեւանքով ցիստեռնը գլորվել եւ հայտվել է ձորում: Օպերատիվորեն դեպքի վայր է ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Նոյեմբերյանի թիվ 64 հրշեջ փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ: Օպերատիվորեն ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Տավուշի մարզի գումարտակի 2-րդ վաշտի 1-ին դասակի պարեկները՝ գումարտակի հրամանատար Լեւոն Մարտիրոսյանի գլխավորությամբ: Պարեկները սահմանազատել են տարածքը եւ տեղում իրականացրել հերթապահություն: Ըստ նախնական տեղեկությունների՝ բարեբախտաբար, տուժածներ չկան:

ԻՍԿԱԿԱՆ ԱՆԱԿՆԿԱԼ

Մարտի 8-ը աշխարհում նշվում է որպես կանանց միջազգային տոն: Հայաստանում նույնպես նշվում է այդ գեղեցիկ տոնը, որին շարունակում է կանանց միամսյակը: Ավանդույթի համաձայն՝ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունը հերթական անակնկալն էր պատրաստել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի ծննդատանը գտնվող հղի կանանց համար: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ծննդատուն էին այցելել ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի փրկարարները, ովքեր դեռ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունում աշխատելու ժամանակվանից ձեռք են բերել չորս հրացանակիրներ Աթոս, Պորտոս, Արամիս եւ Դարտանյան անունները: Հրացանակիրների հետ էին նաեւ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության տնօրենի տեղակալ Տիգրան Պետրոսյանն ու ՓԾ հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոնի պետ Հայկ Նաղդալյանը: Արդեն տեղում պարզվեց, որ փրկարարները ժամանել էին ծննդատուն եւ տանիքից հատուկ ճոպաններով իջան ու ծեծելով հիվանդասենյակների պատուհանները՝ շնորհավորեցին ապագա մայրերի Մարտի 8-ը եւ նրանց փոխանցեցին վարդեր: Ֆոտոլրագրողի հետ զրույցում մայրերն ասում էին. «Իսկական անակնկալ: Պարզվում է մեր փրկարարները ոչ միայն մարդ են փրկում, ինչին բազմաթիվ անգամ ականատես ենք եղել, այլ նաեւ կարողանում են նման անակնկալ մատուցել»: Ֆոտոլրագրողը հայտնում է, որ այս գեղեցիկ ավանդույթի կնքահայրը Արտակարգ իրավիճակների նախարար, գեներալ-մայոր, երջանկահիշատակ, իսկական հայ, լեգենդ դարձած Արմեն Երիցյանն էր, որից հետո այն շարունակեց արտակարգ իրավիճակների նախկին նախարար, մեծատառով հայ մարդ, իրավապահ համակարգում եւ ժողովրդի մոտ մեծ հեղինակություն վայելող, գեներալ-մայոր Ֆելիքս Ցոլակյանը ու հիմա այդ ավանդույթը շարունակում են ՀՀ ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանն ու ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության տնօրեն Կամո Ցուցուլյանը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 6-ից մարտի 7-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 111 դեպք, որոնցից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՌՈՒՍԱԿԱՆ ԶՈՐԱՆՈՑՆԵՐ՝ ՈՍԿԵՊԱՐՈՒՄ

Տարածված խոսակցություններ կան, որ առաջին փուլով Ադրբեջանին հանձնվելու են Տավուշի մարզի տարածքում գտնվող, խորհրդային ժամանակ ադրբեջանաբնակ Աշաղը Ասպիքարա (Ներքին Ոսկեպար), Բաղանիս-Այրում, Խերմիլի, Ղզլհաջիլի գյուղերը, ավելի ճիշտ՝ ավերակներով այն տարածքները, որտեղ գտնվել են այդ գյուղերը: Նոյեմբերյան խոշոր համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղի հարակից տարածքում՝ հայ-ադրբեջանական փաստացի սահմանից բավականաչափ հեռու՝ թիկունքում, հողաշինական աշխատանքներ են կատարվում, բնագծեր են փորվում: Ոսկեպարի բնակիչները կարծում են, որ դրանք պաշտպանական 2-րդ կամ 3-րդ բնագծեր են, նրանց խոսքերով՝ դրանց կառուցումը սկսվել է դեռեւս 7 տարի առաջ՝ 2017 թվականին: Ոսկեպարցիների բնակիչներից ոմանք էլ կարծում են, որ դա արվում է այն նպատակով, որ Աշաղը Ասպիքարա (Ներքին Ոսկեպար) գյուղի տարածքը հանձնելուց հետո հայ-ադրբեջանական սահմանագիծը փոխվելու, դեպի Հայաստանի տարածք նահանջելու է, եւ ներկայումս կառուցվող 2-րդ բնագծով նպատակ կա ամրացնել նոր ձեւավորվելիք սահմանի պաշտպանությունը: Ոսկեպար գյուղի տարածքում է գտնվում Ռուսաստանի զինուժի զորանոցը, որի շինարարության համար ՀՀ կառավարության առաջարկով Նոյեմբերյան համայնքի ավագանին Ոսկեպար բնակավայրի հողերից 2 հեկտար տարածք նվիրաբերել է: Ռուսաստանի զինուժի համար նման մի զորանոց էլ կառուցվել է Բերդ խոշոր համայնքի սահմանամերձ Այգեպար գյուղի հարակից գոտում՝ խորհրդային ժամանակ գործած փոքր օդանավակայանի տաարածքում; Նիկոլ Փաշինյանի իշխանությունը փաստացի հրաժարվել է Ռուսաստանի միջնորդությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանի սահմանագծում եւ սահմանազատում իրականացնելուց: Այս պայմաններում անհասկանալի ու անտրամաբանական է Ոսկեպարում եւ Այգեպարում ռուսական զինուժի առկայությունը, հավաքովի մոդուլներից սարքված այդ զորանոցների գոյությունը: ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով՝ Տավուշի մարզի սահմանագոտում, անկլավ հանդիսացող կամ այդպիսին չհանդիսացող, նախկինում ադրբեջանաբնակ գյուղերի հարակից տարածքներում ՊՆ-ն հողաշինական ինչ աշխատանքներ է կատարում, ինչ նպատակով, Տավուշի մարզի Ոսկեպար եւ Այգպար գյուղերի սահմանամերձ տարածքներում Ռուսաստանի զինուժի կողմից կառուցված, հավաքովի կոնստուկցիաներով շենքերը ինչ նպատակով են կառուցվել, ներկայումս դրանք որպես ինչ են ծառայում: ՀՀ պաշտպանության նախարարությունից դեռեւս պատասխան չենք ստացել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՓԱԿԵԼ ՀՈԱԿ-ՆԵՐԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ՝ ԸՍՏ ՏՆՕՐԵՆԻ ՍԻՄՊԱՏԻԱՅԻ

ArmLur.am -ը ահազանգ է ստացել բաղամացիներից. նրանց խոսքով՝ Օշականում ցանկանում են փակել ՀՈԱԿ-ները, որի մասին տեղյակ են եղել Աժ առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նարեկ Զեյնալյանը եւ Առողջապահության նախարարությունը:

«Խոշորացումից հետո 9 բժշկական ամբուլատորիաների տնօրեններից ազատել ու ոչ մասնագետների են դրել (հիմնականում Աշտարակի շրջանին է վերաբերում): Բերել են մի դրույթ, որ մասնագիտությամբ բժիշկը իրավունք չունի լինի միեւնույն ժամանակ գյուղական բուժական ամբուլատորիայի տնօրեն»,-պատմում է մեզ դիմած քաղաքացին: Նրա խոսքով՝ 2023 թվականի հունվարի 27-ին կանչեցին տնօրենների ու ասացին, որ փետրվարի 1-ից ազատում են աշխատանքից: Բժիշկները դիմել են «Առողջության իրավունք» ՀԿ-ին, դիմել են Առողջահապահական տեսչություն: Այնտեղից գտել են, որ ոչ իրավաչափ է իրենց կարգադրությունը տնօրեններին ազատելու: Քաղաքապետը դա հիմք չի ընդունել:

«ԱՆ-ից ֆինանսական միջոցներ տրվում են՝ ըստ տնօրենի սիմպատիայի: Տնօրեններին փոխելու հարցը դատարանում հաղթել են, վերաքննիչի որոշմամբ տնօրեններն իրավունք ունեն աշխատելու: Հիմա որոշել են լուծարել հիմնարկները, ավագանին է որոշել փետրվարի 15-ին: Ուզում են մեկ Աշտարակի ամբուլատորիա բացել»,- հավելում է քաղաքացին: «Առողջության իրավունք» ՀԿ-ի տնօրեն Անուշ Պողոսյանն այս մասին ասաց.

«Անցած տարի, եթե չեմ սխալվում, մարտ կամ ապրիլ ամիսներին, Աշտարակի համայնքապետը հրավիրել էր իր ամբուլատորիաների տնօրեններին եւ հայտարարել էր, որ այլեւս չեն աշխատելու: Տնօրենները դիմել էին բոլոր պետական մարմիններին, սակայն ոչ ոք իրենց դրական արձագանք չի տվել, բոլորն ասել էին, որ համայնքի ղեկավարը ճիշտ է վարվել: Տնօրենները դիմեցին մեզ, մենք առաջին փուլով պաշտոնական գրություններ գրեցինք բոլոր թվարկված կառույցներին, բոլոր տեղերից ստացանք պատասխաններ, որոնք հուսադրող չէին, արդյունքում բողոքով դիմեցինք տեսչական մարմնի աշխատանքային բլոկին: Արդյունքում տեսչական մարմնի ղեկավարը որոշում, կարգադրագիր հրապարակեց, որում նշված էր՝ օրինական չեն արված ազատումները, եւ պետք է վերականգնել բժիշկներին աշխատաքի: Աշտարակի տնօրենը թքած ունեցավ տեսչական մարմնի որոշման վրա եւ շարունակեց նույն ոճով: 2 բժիշկ որոշեց, որ պետք է դատի տալ համայնքապետի որոշումը, առաջին ատյանում շահեցինք դատը, այնուհետեւ վճռաբեկում հաղթեցի, որի արդյունքում 8 ամբուլատորիաների տնօրենների ապօրինի ազատման դիմումը չեղարկվեց, որի արդյունքում այդ մարդիկ վերադարձան իրենց աշխատանքին: Հետաքրքիրն այն է, որ ոչ մի պետական կառույց այդ անօրինակությունը չկասեցրեց եւ խոչընդոտներ առաջացրեց՝ մինչեւ վարչական դատարան տնօրենների հասցնելով»,-ասաց նա: ArmLur.am-ը կապ հաստատեց Առողջապահության նախարարության մամուլի քարտուղար Մարիամ Ծատրյանի հետ, որն ասաց. «Օշականում որեւէ ամբուլատորիա չի փակվում: Ամբուլատորիաների տնօրեններն իրականացնում էին եւ՛ տնօրենի գործառույթը, եւ՛ ընտանեկան բժշկի: Այժմ խոշորացման կամ այսպես կոչված միավորման արդյունքում վարչատնտեսական եւ կառավարչական աշխատանքները կանի այլ միավորված ամբուլատորիաների ղեկավարը, իսկ նախկին տնօրենները կշարունակեն ընտանեկան բժշկության բուժական իրենց աշխատանքով»:

Armlur.am-ը փորձեց կապ հաստատել Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության հետ մեկնաբանություն ստանալու նպատակով, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՈԼՈՐՏԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆԳՆ-ՈՒՄ

Ներքին գործերի նախարարությունում ՆԳ նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանի գլխավորությամբ մարտի 7-ին տեղի է ունեցել աշխատանքային քննարկում, որին մասնակցում էին Արդարադատության նախարարության, Քննչական կոմիտեի, Դատական դեպարտամենտի եւ ՆԳՆ ոստիկանության պատասխանատու ծառայությունների ներկայացուցիչներ: Այս մասին տեղեկացրին ՀՀ ներքին գործերի նախարարությունից:

«Հիմքում ունենալով ՀՀ վարչապետի հանձնարարականը, ոլորտային բարեփոխումների շրջանակներում պետական տարբեր կառույցներում գործառույթների հստակեցման, կրկնությունների բացառման կարեւորությունն ու ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության երաշխավորումը՝ քննարկման նպատակն էր միասնական եւ փոխհամաձայնեցված դիրքորոշում ձեւավորել՝ ձերբակալված, կալանավորված անձանց եւ դատապարտյալների ուղեկցման, պահպանման, այդ թվում՝ ուղեկցման դեպքում սննդի եւ հիգիենայի ապահովման գործընթացում ներգրավված պետական տարբեր մարմինների գործառույթների հստակեցման եւ տարանջատման վերաբերյալ:

Մասնակիցները համակարծիք էին, որ ուղեկցման եւ պահպանության ոլորտում գործառույթների ներկայիս ոչ հասցեական բաշխվածությունը եւ օրենսդրական առկա լուծումներից չբխող պրակտիկան ՆԳՆ ոստիկանության համար առաջացնում է լրացուցիչ ծանրաբեռնվածություն եւ չի բխում ՀՀ կառավարության որդեգրած ոլորտային գործառույթների որոշակիացման մոտեցումից:

Հանդիպմանը նախորդած աշխատանքային քննարկումների եւ հանդիպման ընթացքում հնչած տեսակետների համադրմամբ, որպես ամփոփում, ընդունելի մոտեցում է ձեւավորվել առ այն, որ՝

- ձերբակալված, կալանավորված անձանց եւ դատապարտյալների ուղեկցման ու պահպանման գործընթացում, որպես պետական մարմինների գործառույթների սահմանազատման սկզբունք, պետք է հիմք ընդունվի այն հանգամանքը, թե նշված անձինք, որ մարմնի շահառու են հանդիսանում տվյալ փուլում: Ըստ այդմ, ձեւավորվել է մոտեցում, որ վերջնարդյունքում ձերբակալվածների ուղեկցումը պետք է իրականացվի ՆԳՆ ոստիկանության, կալանավորված եւ դատապարտյալների ուղեկցումը՝ Քրեակատարողական ծառայության կողմից:

- նշված ծառայությունների կողմից դատարան ներկայացված ձերբակալված, կալանավորված անձանց եւ դատապարտյալների պահպանությունը այդ պահից մինչեւ վերջիններիս դատարանում գտնվելու անհրաժեշտության վերացումը պետք է իրականացվի Դատական դեպարտամենտի դատական կարգադրիչների ծառայության կողմից:

- դատարանում պահպանության տակ գտնվելու ընթացքում պետք է երաշխավորվի անձի սնվելուեւ այլ վերաբերելի իրավունքները:

- պետք է մշակվեն դատարանում առկա խցերի տիպային մոդելն ու չափանիշները՝ առկա եւ նոր դատարանների համար հնարավոր լուծումներով, ու դրանցում ազատությունից զրկված անձանց պահելու իրավական ռեժիմները»,- ասվում է հաղորդագրության մեջ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 2 մարդ զոհվել է, 17-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՈՒՂԵՐՁ

ԻՐԵՆՑ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ԴԵՐՈՎ

Մարտի 8-ը կանանց դերակատարումն ընդգծելու, խրախուսելու, նրանց ստեղծարար ներուժն արժեւորելու, եղած խնդիրների մասին մտածելու լրացուցիչ առիթ է: Կանանց դերը մշտապես շրջադարձային եւ որոշիչ է եղել տարբեր հասարակություններում եւ բոլոր ժամանակներում. այս մասին ընդգծել է Ժաննա Անդրեասյանը Կանանց միջազգային օրվա առթիվ իր ուղերձում:

«Սիրով եւ ջերմությամբ շնորհավորում եմ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ:

Մարտի 8-ը կանանց դերակատարումն ընդգծելու, խրախուսելու, նրանց ստեղծարար ներուժն արժեւորելու, եղած խնդիրների մասին մտածելու լրացուցիչ առիթ է: Կանանց դերը մշտապես շրջադարձային եւ որոշիչ է եղել տարբեր հասարակություններում եւ բոլոր ժամանակներում: Հատկապես մեր օրերում չկա մի ոլորտ, որտեղ կանայք ասելիք, անելիք եւ նշանակալի ներդրում չունենան:

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ոլորտներում կնոջ գործունեությունն առանձնակի կարեւոր է, քանի որ հենց այս ասպարեզներում է ձեւավորվում հասարակության ապագան՝ շնորհիվ արժեքների, ստեղծագործության, նվաճումների եւ հաղթանակների: Մարտահրավերներին դիմակայելու կանանց միասնականությունն ու համախմբումը չբացահայտված մեծ ներուժ ունեն, որը կարող է հասարակության եւ պետության զարգացմանը հավելյալ խթան հաղորդել եւ առաջընթացի նոր ուղիներ բացել:

Այս ամենը մեզ մղում է ամեն օր խրախուսելու եւ աջակցելու կանանց, ստեղծելու նոր հնարավորություններ նրանց կարողությունները զարգացնելու եւ կատարելագործելու ուղղությամբ: Եվ, իհարկե, այս համատեքստում չափազանց կարեւոր է նախեւառաջ ճանաչել, գնահատել եւ վերարժեւորել մեր պետության կայացման գործում երբեւէ կարեւոր դերակատարում ունեցած կանանց:

Սիրելի՛ կանայք եւ աղջիկներ, խիզախորեն գնացեք ձեր երազանքների եւ նպատակների հետեւից՝ համոզմունքով, որ շարունակական ու հետեւողական ջանքերն անպայման արդյունք են տալիս:

Մաղթում եմ ձեզ զորեղություն, անսպառ եռանդ, դժվարություններից չվհատվելու կարողություն, սեր եւ ներդաշնակություն ընտանիքում, նորանոր ձեռքբերումներ մասնագիտական գործունեության, պետության զարգացման ասպարեզում»,-գրել է նա:

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԴԺԳՈՀ ԵՆ

Արցախի Հանրապետության բռնի տեղահանված քաղաքացիների համար առաջնային է բնակարանային ապահովման խնդիրը:

ՀՀ կառավարության կողմից մշակվող բնակարանային ապահովման աջակցության ծրագրի նախադրյալները վերջերս ներկայացրել է ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը: Ծրագիրն իրականացվելու է փուլային եւ, ըստ ծրագրի, յուրաքանչյուր չափահաս անձի տրամադրվելու է 3 մլն ՀՀ դրամ: Ընդ որում՝ անչափահասներին տրվող աջակցության չափը կլինի անվերադարձ, իսկ չափահասներինը՝ վերադարձելի: Ծրագրի դրույթների համաձայն՝ կառուցվող կամ ձեռք բերվող տանը կամ բնակարանում 10 տարի ապրելու եւ ֆինանսական որոշակի պարտավորություններ կատարելու դեպքում այն կանցնի տվյալ ընտանիքի սեփականությանը: Եթե վերադարձվող գումարն ընտանիքի չափահաս անդամները չկարողանան ապահովել, նրանք կշարունակեն ապրել այդ բնակարաններում՝ ուղղակի առանց այն վաճառելու եւ սեփականության իրավունքի: Իսկ եթե սահմանված չափը վերադարձնեն, ապա կստանան սեփականության իրավունք եւ կկարողանան վաճառել գույքը: Ծրագրից կարող են օգտվել նաեւ այն անձինք, ովքեր Հայաստան էին տեղափոխվել մինչեւ 2023թ. սեպտեմբերը կամ 2020թթ. 44-օրյա պատերազմին հաջորդող ժամանակահատվածում: Ծրագիրը պարտադրելու է նաեւ ունենալ ՀՀ քաղաքացիություն: ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի ներկայացրած այս ծրագիրը բավականին անհանգստություն առաջացրեց արցախցիների քաղաքացիների շրջանակներում: Արցախի 32 կազմակերպություններ միահամուռ ուժերով ձեւավորեցին «Արցախի ժողովրդի բնակարանային ապահովման նախաձեռնություն»-ը, որը վերջերս անդրադառնալով բռնի տեղահանված արցախցիների խնդիրներին՝ առաջ քաշեց իրենց կողմից մշակված ծրագիրը, որը, նրանց կարծիքով, ավելի արդյունավետ կկիրառվի: «Արցախի ժողովրդի բնակարանային ապահովման նախաձեռնությունը» մարտի 5-ին բաց նամակով դիմեց ՀՀ Կառավարությանը՝ ներկայացնելով բռնի տեղահանված արցախցիների բնակարանային կարիքների բավարարման քննարկվող ծրագրերի վերաբերյալ: Բաց նամակում անդրադառնալով արցախցիների բնակարանային կարիքների բավարարման խնդիրներին՝ առաջարկվել է ծրագիրը հնարավորինս իրականացնել արցախյան համայնքների պահպանման սկզբունքով եւ իրագործման ժամկետը սահմանել 2 տարի՝ներգրավելով նաեւ միջազգային ու սփյուռքյան ֆինանսական ռեսուրսները: Բնակելի անշարժ գույք ձեռք բերելու նպատակով առաջարկվել է յուրաքանչյուր բռնի տեղահանված անձի հատկացնել բազային 5,000,000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է մարզային բնակավայրերի երկրորդային շուկայի միջին գներին: Ընդ որում՝ առաջարկվել է գումարը հատկացնել անվերադարձելիության սկզբունքով: Առաջարկվել է նաեւ հրաժարվել ՀՀ քաղաքացիության պահանջից եւ աջակցել բնակֆոնդի էժան ու արագ կառուցապատման ծրագրերին: Առաջարկվող ծրագրի սկզբունքներից է նաեւ, որ առանց կրճատումների շարունակվի 40,000+10,000 դրամի աջակցության ծրագիրը մինչեւ տվյալ ընտանիքին բնակարանով ապահովելը, փոքրակազմ (մինչեւ 3 անդամ) ընտանիքների համար այլ մոտեցում ցուցաբերել, ըստ անդամների քանակի՝ ընտանիքին հատկացնել ողջամիտ չափի ֆինանսական աջակցություն գույք ձեռք բերելու նպատակով, ծրագրում սահմանել առաջնահերթություններ եւ լրացուցիչ արտոնություններ զոհվածների ու առաջին խմբի հաշմանդամների ընտանիքների համար, նախատեսել նաեւ համակարգային լուծումներ Արցախից բռնի տեղահանված անձանց եւ հյուրընկալ բնակավայրերի բնակչության կայուն զբաղվածության ապահովման համար: Առաջարկվել է ծրագրի նախագիծը ՀՀ օրենսդրությամբ ու իրավակիրառ պրակտիկայով նախատեսված կերպով դնել հանրային լայն քննարկման եւ հաշվի առնել շահառուների մտահոգություններն ու առաջարկները: Վերոնշյալ ծրագրի դրույթները, ըստ «Արցախի ժողովրդի բնակարանային ապահովման նախաձեռնության», կնպաստի Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց միասնականությանը, ինքնության պահպանմանն ու արտագաղթի բացառմանը, ինչպես նաեւ ՀՀ ժողովրդագրական ու տնտեսական զարգացման որոշ խնդիրների լուծմանը: «Այն պետք է ռազմավարական առումով հաշվի առնի նաեւ Արցախ հնարավոր վերադարձի նպատակը՝ անհրաժեշտ պայմաններ ու գործողություններ ապահովելով այդ նպատակի համար»,- նշված էր նամակի մեջ: Նամակում նաեւ Արցախի պաշտոնյաները հայտնեցին իրենց պատրաստակամությունը ցանկացած ձեւաչափով հանդիպումների ու քննարկումների անցկացմանը, որոնք նպատակաուղղված կլինեն ծրագրի ներառականության, արդարացիության ու արդյունավետության ապահովմանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔ

ՊԻՏԻ ԼԻՆԵՐ ԱՆՎՃԱՐ

Երեւանի քաղաքապետարանը մարտի 8-ին կանանց տոների առիթով կանանց համար տրանսպորտային բոլոր միջոցները անվճար դարձնելու նախաձեռնությունն էլ ձախողեց:

ArmLur.am-ը շրջեց եւ մի քանի տրանսպորտային միջոցից օգտվեց: Երբ փորձում էինք վճարել, ոչ մի առարկություն չէինք լսում, իսկ երբ փորձում էինք չվճարել, ստիպում եւ պահանջում էին վճարել ուղեվարձը:

ArmLur.am-ը նաեւ այս հարցի վերաբերյալ ահազանգեր է ստացել, որ 47, 43 տրանսպորտային միջոցներում վարորդները գումար են պահանջել:

Հիշեցնենք, որ մարտի 8-ին Երեւանում հասարակական տրանսպորտը կանանց համար պիտի լիներ անվճար: Այս մասին Երեւանի քաղաքապետարանի գործակարգավարական խորհրդակցության ընթացքում հայտնել էր Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը՝ ընդգծելով, որ մետրոպոլիտենով, համայնքային «Ժոնգթոնգ», «ԳԱԶել-Սիթի» մակնիշի ավտոբուսներով եւ տրոլեյբուսներով երթեւեկող աղջիկներից եւ կանանցից ուղեվարձի գումար չի գանձվելու:

Սակայն փաստը մնում է փաստ, որ ոչ մի նվեր էլ չեղավ Երեւանի քաղաքապետարանի կողմից:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐԱՄԻՋՈՑ

«ՆԱՄԱԿԱՆԻՇԵՐԻ ԶԱՐՄԱՆԱՀՐԱՇ ԱՇԽԱՐՀՈՒՄ»

«Նամականիշերի զարմանահրաշ աշխարհում» պատկերազարդ եւ գունագեղ գիրքը մանուկներին պատմում է նամականիշի ստեղծման մասին, պատասխանում այն հարցին, թե ինչ է ֆիլատելիան, ովքեր են ֆիլատելիստները, ինչ արժեք ունեն նամականիշերն ու ինչ դեր են խաղում յուրաքանչյուր պետության զարգացման գործում:

Յուրահատուկ գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ մարտի 6-ին «Զանգակ» գրատանը:

«Հայփոստ»-ի ֆիլատելիայի վարչության ղեկավար Շուշան Ալեքսանյանը շնորհանդեսին ներկա դպրոցականներին տեղեկացրեց, որ նամականիշը պետական խորհրդանիշներից մեկն է, ուստի նամականիշի վրա երբեք ոչ մի պատահական պատկեր չի հայտնվում: Այն ներկայացնում է պետությունը, պատմությունն ու մշակույթը:

«Նամականիշը փոստային վճարամիջոց է: Նամականիշի առկայությունը նամակի վրա խոսում է այն մասին, որ նամակի համար արդեն վճարել են»,-ասաց Ալեքսանյանն ու հավելեց՝ ճամփորդելով ամբողջ աշխարհում՝ նամականիշերը ներկայացնում են հային եւ Հայաստանը, ուստի Հայաստանի փոքրիկ դեսպաններն են աշխարհում:

Ալեքսանյանը պատմեց՝ երբ նամականիշեր դեռ չկային, նամակի համար պետք է վճարեր հասցեատերը, որը երբեմն հրաժարվում էր դա անել՝ պատճառաբանելով, որ ինքը չի խնդրել, որ իրեն նամակ ուղարկեն: Այդ երեւույթը խնդիրներ է առաջացրել: «Ռոլանդ Հիլ անունով անգլիացի գիտնականը որոշեց ծրարի վրա նամականիշ փակցնել, ինչը կվկայի, որ նամակի համար վճարված է: 1840 թվականին տեղի ունեցավ նամականիշի գյուտը, որն իսկական հեղափոխություն էր հեռահաղորդակցության ոլորտում, փոստային բնագավառում»,-շեշտեց Ալեքսանյանը:

Առաջին նամականիշը թողարկել է Անգլիան: Նամականիշը կոչվում է «Սեւ պենի», որի վրա պատկերված է Վիկտորիա թագուհին: Այն աշխարհի ամենաթանկարժեք ու հայտնի նամականիշերից է:

Հայաստանի երրորդ Հանրապետությունը 1992 թվականին է թողարկել առաջին նամականիշը: Հայտարարվել է մրցույթ, որում 400-ից ավելի աշխատանքներ են ներկայացվել: Հաղթել է Հարություն Սամուելյանը: Նամականիշի վրա պատկերված է եռագույնը՝ Արարատի ֆոնին:

«19-րդ դարում նամականիշ հավաքելը դարձել է մարդկանց սիրած հոբբիներից մեկը: Նամականիշեր հավաքելը համարվում է ինտելեկտուալ հոբբի, քանի որ նամականիշերը պարունակում են տեղեկություններ, որոնք այլ աղբյուրներից հնարավոր չէ ստանալ: Նամականիշեր հավաքողներին անվանում են ֆիլատելիստներ, իսկ գիտությունը, որ համախմբում է ֆիլատելիստներին, նամականիշերը, դրանց ուսումնասիրությունը կոչվում է «Ֆիլատելիա»: Այն հունարեն բառ է եւ նշանակում է սեր նամականիշերի նկատմամբ»,-ասաց Ալեքսանյանն ու շեշտեց՝ նամականիշերի արժեքները երբեմն կախված են նրանից, թե երբ են թողարկվել:

Այսօր աշխարհի ամենաթանկ նամականիշը «Վարդագույն Գվինեա» է կոչվում, որից մի քանի օրինակ կա: Վերջերս նամականիշի օրինակներից մեկն աճուրդում վաճառվել է 9 մլն դոլարով:

Աշխարհում կա 40 միլիոնից ավելի ֆիլատելիստ, իսկ Հայաստանում նրանք 300-ից ավելի են: Հայտնի ֆիլատելիստներից են եղել Ջոն Լենոնը, Ֆրեդի Մերկուրին, Եղիսաբեթ երկրորդ թագուհին եւ այլք:

Շուշան Ալեքսանյանը, դիմելով դպրոցականներին, ասաց՝ եթե նրանք լավ նկարում են, ունեն նամականիշ ստեղծելու գաղափարներ, կարող են իրենց աշխատանքներն ուղարկել փոստ: Չի բացառվում, որ այդ աշխատանքը թողարկվի: Այդպես հեղինակը կմնա պատմության մեջ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ավետ Պողոսյանը նամականիշերի ներկայությունը գրքի տեսքով հրաշալի գաղափար համարեց: Դիմելով դպրոցականներին՝նա ասաց, որ նրանք այն տարիքում են, որ ճանաչում են աշխարհը, նոր շերտեր բացահայտում այդ աշխարհում, իսկ այդ գործում մեծ դեր կարող է խաղալ գրականությունը, ինչպես նաեւ մանկական ֆիլատելիային նվիրված գիրքը:

«Մենք շատ փոքր ենք, բայց մեզ շրջապատող աշխարհը շատ մեծ է, նույնքան մեծ պետք է լինեն ձեր մտքերը»,-շեշտեց Պողոսյանը:

«Հայփոստ»-ի գլխավոր գործադիր տնօրեն Արայիկ Աբրահամյանն էլ ասաց, որ առաջին անգամ են թողարկում մանկական ֆիլատելիային նվիրված պատկերագիրք: «Նախորդ տարի մենք մեծ աշխատանք ենք կատարել Ֆիլատելիստների հայկական ասոցիացիայի հետ. բազմաթիվ հանդիպումներ ենք ունեցել, ուշադիր ենք եղել գրքի բոլոր դետալների նկատմամբ: Նամականիշեր հավաքելը հատուկ մշակույթ է ձեւավորում, եւ մարդը յուրաքանչյուր գործ անելիս սկսում է ավելի մեծ ուշադրություն դարձնել մանրուքներին, ձգտում է կատարյալին»,-նշեց Աբրահամյանը:

Ֆիլատելիստների հայկական ասոցիացիայի նախագահ Հովիկ Մուսայելյանը հավաստիացրեց՝ ֆիլատելիան զարգանում է այն երկրներում, որտեղ զարգանում է մանկական ֆիլատելիան: Նա եւս ասաց՝ ինչպես դրոշը, զինանշանը, դրամը, այնպես էլ նամականիշը պետական խորհրդանիշ է:

Մուսայելյանը դպրոցականներին տեղեկացրեց, որ երկրների նախագահները, վարչապետները, այլ պետական այրեր տարբեր երկրներ պաշտոնական այցերի ժամանակ միմյանց նամականիշերի հավաքածուներ են նվիրում, որովհետեւ դրանց միջոցով պատկերացում է ստեղծվում տվյալ երկրի պատմության, մշակույթի կարեւորագույն իրադարձությունների մասին:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության աջակցությամբ «Հայփոստ»-ը 2024-ին թողարկելու եւ շրջանառության մեջ է դնելու Ակսել Բակունցին, Պարույր Սեւակին, Շառլ Ազնավուրին, Սերգեյ Փարաջանովին նվիրված նամականիշեր:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅՑԸ ՀԱՂԹԵԼ Է

Կառավարությունը պահուստային ֆոնդից Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը հատկացնում է 279 միլիոն 954 հազար 300 դրամ՝ Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում ՈՒԵՖԱ-ի ֆուտզալի չեմպիոնների լիգայի կիսաեզրափակիչ եւ եզրափակիչ մրցաշարի հանդիպումները անցկացնելու համար:

Կառավարության նիստում համապատասխան նախագիծը ներկայացրել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

«Ներկայացվող նախագծով թե՛ Կառավարության ծրագրի, թե՛ սպորտի զարգացման ռազմավարությամբ կարեւոր քայլ ենք իրականացնում, որտեղ առանձնահատուկ շեշտադրվում է խաղային մարզաձեւերի զարգացման կարեւորությունը:

Հենց այդ նպատակով 2024-26 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերով նախորդ տարի արդեն հաստատել ենք մարզերում երկու ֆուտբոլային ստադիոնների նախագծման եւ կառուցման աշխատանքները, իսկ ակադեմիական քաղաքի հատակագծում տեղ է գտել Ազգային ստադիոնը»,- ասաց Անդրեասյանը:

Նախարարի խոսքով՝ վերջին տարիներին հատկապես հաջող է հանդես գալիս Հայաստանի ֆուտզալի հավաքականը, որը վարկանիշային առումով տեղ է գտել Եվրոպայի 20 լավագույն հավաքականների շարքում եւ նախորդ տարի առաջին անգամ մտել է էլիտ ռաունդի եզրափակիչ փուլ: Անդրեասյանը նշեց, որ ընտրական փուլում պաշտոնական հանդիպումներում յոթ անընդմեջ հաղթանակ է գրանցվել, իսկ ընդհանուր խաղերը, նաեւ ընկերական խաղերը հաշված, հավաքականը 10 անընդմեջ հաղթանակ է տարել:

«Այժմ արդեն խաղային մարզաձեւերի զարգացման նոր հնարավորություն է ձեւավորվում, քանի որ 2024 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Երեւան քաղաքում նախատեսվում է անցկացնել ՈՒԵՖԱ-ի ֆուտզալի չեմպիոնների լիգայի եզրափակիչ մրցաշարի հանդիպումները:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հայտը հաղթող է ճանաչվել Հունաստանի, Լիտվայի, Լեհաստանի, Իսպանիայի եւ Շվեյցարիայի ֆուտբոլի ֆեդերացիաների հետ մրցակցությունում:

Այսպիսով, առաջին անգամ որեւէ խաղային մարզաձեւի եվրագավաթային եզրափակիչը կանցկացվի Հայաստանի Հանրապետությունում:

Ֆուտզալի չեմպիոնների լիգայի եզրափակչին կմասնակցեն իսպանական «Բարսելոնան» եւ «Պալմա Ֆուտզալ»-ը, ինչպես նաեւ պորտուգալական «Սպորտինգ»-ը եւ «Բենֆիկան»:

Կիսաեզրափակիչները կկայանան մայիսի 3-ին, եզրափակիչը եւ 3-րդ տեղի հանդիպումը՝ մայիսի 5-ին:

Նախատեսվում է, որ այս իրադարձությունները կհանդիսանան նաեւ զբոսաշրջային զգալի հոսքի առիթ՝ հաշվի առնելով մրցաշարի հեղինակությունն ու մրցող թիմերի երկրպագուների բանակը:

Բոլոր հանդիպումները տեղի կունենան Երեւանի Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում: Պետք է նշել նաեւ, որ նախատեսվում է համապատասխան բարեկարգումներ իրականացնել հատկապես լուսային հատվածի ու հանդերձարանի մասով: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել Կառավարության պահուստային ֆոնդից Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը հատկացնել 279 միլիոն 954 հազար 300 դրամ»,- եզրափակեց Անդրեասյանը:

●Ապրիլի 18-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի կունենա «Մանուշակ Շիրինյան. «Պոեզիայի արահետներով»» գրական երեկոն: Տոմսերի արժեքը՝3000-7000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ իրավունքներ եւ պարտականություններ ունեն ապաստան հայցողները:

Նարինե Սահակյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողները Հայաստանում ազատ տեղաշարժի, աշխատելու, կրթության, անվճար իրավաբանական խորհրդատվություն ստանալու, անվճար բուժօգնություն ստանալու եւ մի շարք այլ իրավունքներ ունեն:

Նրանք իրենց իրավունքներից օգտվելիս պետք է հարգեն ՀՀ քաղաքացիների, այլ անձանց օրինական շահերը, իրավունքները եւ ազատությունները, պահպանեն հասարակական կարգը, ՀՀ անվտանգությունը:

ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապաստան հայցողները պարտավոր են համագործակցել Միգրացիոն ծառայության հետ, տրամադրել հավաստի ու ճշմարիտ տեղեկություններ, վճարել բոլոր տեսակի հարկերն ու տուրքերը, ինչպես Հայաստանի քաղաքացիները: Նրանք պարտավոր են պահպանել Հայաստանի օրենսդրության պահանջները:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը:

Տիգրան Վիրաբյան (48 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է՝ ՀՀ կառավարության 2007 թ. հունիսի 1-ի N 827-Ն որոշման պահանջների համաձայն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս հայտատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները /3 օրինակ/: Մաքսային մարմնում համապատասխան ընթացակարգով ձեւակերպվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ցուկերբերգին եւ կնոջը հիացրել է Ասիայի ամենահարուստ մարդու որդու՝ 1 մլն դոլար արժողությամբ ժամացույցը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	- 3 - 7	+ 4 + 9
Կոտայքի լեռներ	- 8 - 12	+ 5 + 8
Կոտայքի նախալեռներ	- 5 - 8	+ 8 + 10
Գեղարքունիք	- 8 - 13	+ 3 + 6
Լոռի	- 6 - 10	+ 8 + 10
Տավուշ	- 4 - 7	+ 8 + 11
Արագածոտնի լեռներ	- 8 - 12	+ 3 + 6
Արագածոտնի նախալեռներ	- 5 - 7	+ 8 + 11

Արարատ	- 4 - 7	+ 11 + 13
Արմավիր	- 4 - 8	+ 10 + 13
Վայոց ձորի լեռներ	- 3 - 7	+ 3 + 6
Վայոց ձորի նախալեռներ	- 3 - 7	+ 10 + 12
Սյունիքի հովիտներ	- 4 - 7	+ 11 + 14
Սյունիքի նախալեռներ	- 9 - 13	+ 7 + 10
ԼՂՀ	- 9 - 10	+ 7 + 9
Երեւան	2 - 4	+ 9 + 11

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.3.2024**

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*